

### 4.2.2. Մարդասիրական օգնություն

Ըստ ԱՀ աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության տվյալների, 2019թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում մարդասիրական օգնության կարգով Արցախի Հանրապետություն են ներմուծվել 397652.5 հազ. դրամի ապրանքներ: Ստացված մարդասիրական օգնության 78.0 տոկոսը կազմել են դեղորայք և բժշկական տարբեր ապրանքները, 9.8 տոկոսը՝ զանազան շինանյութերը, 4.7 տոկոսը՝ ապարատներ և սարքերը, 3.8 տոկոսը՝ մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմները և այլն:

#### ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ առանձին ապրանքախմբերի

	2018թ. հունվար-հունիս	2019թ. հունվար-հունիս	/հազ. դրամ/ Աճի տեմպը, %
<b>Ընդամենը</b>	<b>34864.8</b>	<b>397652.5</b>	<b>11.4 անգ</b>
<i>այդ թվում՝</i>			
Քիմիական արդյունաբերության և նրան առնչվող ճյուղերի արտադրանքներ	-	6223.3	-
Նոր կոշիկ	353.5	-	-
Հագուստեղեն, գլխարկներ, հովանոցներ	666.6	25.3	3.8
Նախկինում օգտագործված հագուստ	30.4	-	-
Ապարատներ և սարքեր	2942.3	18796.0	6.4 անգ
Մեքենաներ, սարքավորումներ, մեխանիզմներ	277.4	15189.5	54.8 անգ
Դեղորայք և բժշկական տարբեր ապրանքներ	16061.3	310351.9	19.3 անգ
Զանազան շինանյութեր	3144.1	38843.7	12.4 անգ
Տարբեր տեսակի ապրանքներ	11389.2	8222.8	72.2

2019թ. հունվար-հունիսին նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ մարդասիրական օգնության ծավալը աճել է 11.4 անգամ: Մարդասիրական օգնությունը ստացվել է ՀՀ-ից, ԱՄՆ-ից և ՌԴ-ից:

#### ԱՀ ներմուծված մարդասիրական օգնության ծավալն ըստ երկրների

	Արժեքը, հազ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2018թ. հունվար- հունիս	2019թ. հունվար- հունիս	2018թ. հունվար- հունիս	2019թ. հունվար- հունիս
<b>Ընդամենը</b>	<b>34864.8</b>	<b>397652.5</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
<i>այդ թվում՝</i>				
ՀՀ	12181.3	206780.1	35.0	52.0
ԱՄՆ	3353.2	147008.8	9.6	37.0
ՌԴ	17864.9	43863.6	51.2	11.0
Գերմանիա	935.8	-	2.7	-
Շվեյցարիա	529.6	-	1.5	-

#### Մարդասիրական օգնության ծավալների դինամիկան (հունվար-հունիսին), ըստ տարիների, հազ.դրամ

